

ՃԱՓՈՆ ՆՇԵՑ ՀԻՐՈՇԻՄԱՅԻ՝ ՀԻՒԼԷԱԿԱՆ ՌՈՒՄԲՈՎ ՌՄԲԱԿՈՇՄԱՆ 75-ԱՄԵԱԿԸ

Ճափոնական Ֆիրոշիմա քաղաքին մեջ զանգեր հնչեցին՝ նշելով քաղաքի հիլեական ռումբով ռմբակոծման 75-ամեակը, որ «Քորոնա» ժահիրի համաճարակին պատճառով սահմանափակ տարրողությամբ յիշատակուեցաւ:

Քաղաքին իշխանութիւնները յայտարարեցին, որ հակառակ «Քորոնա» ժահիրի համաճարակին, որոշած են ոգեկոչումը կատարել՝ նկատի ունենալով կարեւորութիւնը 1945 թուականի վերջաւորութեան 140 հազար կենսեր իլաճ դէպքին:

Ֆիրոշիմայի կեդրոնը գտնուող խաղաղութեան պուրակ մուտքը սահմանափակուած էր միայն վերապրածներով եւ անոնց հարազատներով:

ՄԱՔՐՈՆ. «ԱՅՑԵԼՈՒԹԵԱՆՍ ՆՊԱՏԱԿԸ ԼԻՔԱՆԱՆՑԻ ԱԶԱՏ ԺՈՂՈՎՈՒՐԴԻ ԿՈՂՔԻՆ ԿԱՆԳՆԻԼՆ Է»

Ֆրանսայի նախագահ Էմանուէլ Մաքրոն երէկ այցելեց Լիբանան՝ ամբողջական զօրակցութիւն յայտնելու լիբանանցի ժողովուրդին:

«Լիբանանը կը սիրեմ» եւ «Լիբանան առանձին չէ» կարգախօսներով Լիբանան հասած երիտասարդ նախագահը ուղղուեցաւ ժըմմէյզի՝ հանդիպելու լիբանանցի երիտասարդներուն եւ լսելու անոնց ցաւը:

ժըմմէյզիի մէջ Մաքրոն արժանացաւ լիբանանցիներուն ջերմ ողջոյնին:

Ան հաստատեց, որ Լիբանանին տրամադրուելիք օժանդակութիւնները փտածներուն պիտի չհասնի, այլ՝ ուղղակի ժողովուրդին:

Մաքրոն ընդգծեց, որ Լիբանան փոփոխութեան կարիք ունի՝ հաստատելով, որ ինք տխուր է եւ ցաւ կը զգայ:

«Ֆրանսա պիտի օժանդակէ բնակարաններու շինութեան, սննդեղէն եւ բժշկական պիտոյք ապահովելու», ըսաւ ան:

«Յեղափոխութիւն» եւ «Միշէլ Աունը ահաբեկիչ է» արտայայտութիւններուն պատասխանելով՝ Մաքրոն ըսաւ, որ ինք Լիբանան չէ եկած պետութեան կամ կառավարութեան զօրակցելու, այլ՝ քաղաքական նոր նախաձեռնութիւն մեկնարկելու:

Մաքրոն Պեյրութի միջազգային օդակայանին մէջ դիմաւորուեցաւ հանրապետութեան նախագահ զօր. Միշէլ Աունի կողմէ:

Պեյրութի միջազգային օդակայանին մէջ Մաքրոն յայտարարեց, որ Ֆրանսա Լիբանանին պիտի օժանդակէ առանց նախապայմանի:

Ապա Մաքրոն այցելեց Պեյրութի նաւահանգիստին պայթումին վայրը, ուր ծանօթացաւ արձանագրուած աղէտին տարրողութեան, ինչպէս նաեւ հետեւեցաւ հետաքննութեան եւ փրկարար աշխատանքներուն ընթացքին:



Շար.ը՝ էջ 2



ԵՐԵՍՓՈՒՆԱՆ ԲԱԳՐԱՏՈՒՆԻ ԵՒ ՆԱԽԱՐԱՐ ՕԶԱՆԵԱՆ-ԳԵՌՈՐԳԵԱՆ ԱՅՑԵԼԵՑԻՆ ՎԱՐՉԱՊԵՏ ՏԻԱՊԻ



ՀՀ Լիբանանի Կեդրոնական կոմիտէի ներկայացուցիչ, Երեսփոխան Յակոբ Բագրատունի եւ երիտասարդութեան ու մարմնակրթութեան նախարար Վարդիէ Օհանեան-Գեորգեան երէկ այցելեցին վարչապետ Հասսան Տիապի:

Շար.ը՝ էջ 4

ՀԱՅՐԵՆԻ ԼՐԱՏՈՒՄՍԻԶՈՅՆԵՐՈՒ ՀԱՐՅՈՒՄՆԵՐՈՒ ՊԱՏԱՍԽԱՆԵԼՈՎ՝

«ԱՄԻԿԱ ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԱՂԷՏ Է»

ԸՆԴԳԾԵՑ ՅՎԿՈՐ ԲԱԳՐԱՏՈՒՆԻ



Երեքշաբթի, 4 օգոստոս 2020-ի երեկոյեան Պեյրութը ցնցած ահաւոր պայթումին մասին տեղական թէ արտաքին մամուլին կատարած իր յայտարարութիւններու ծիրին մէջ, ՀՀ Լիբանանի Կեդրոնական կոմիտէի ներկայացուցիչ, Երեսփոխան Յակոբ Բագրատունի, երէկ պատասխանելով հայրենի լրատամիջոցներու հարցումներուն, ըսաւ. «Ասիկա լիբանանեան աղէտ չէ, լիբանանահայութեան աղէտը չէ, ասիկա համահայկական աղէտ է»: «Անկեղծօրէն, ցաւով, յուզումով կ'ըմբամ՝ հոն, ուր մէկ հայու սիրտ կը բաբախէ՝ այս պահուն պէտք է բաբախէ լիբանանի իրաքանչիւր հայ մարդուն համար», ընդգծեց Երեսփոխան Յակոբ Բագրատունի:

ԳԵՍՊԱՆ ԱԹԱՐԷԿԵԱՆ, ԳԵՐԱՊԱՅԾԱՌ ԱՍԱՏՈՒՐԵԱՆ ԵՒ ՎԵՐ. ՀԱՅՏՈՍՄԹԵԱՆ ԱՅՑԵԼԵՑԻՆ «ՇԱՂՁՈՅԵԱՆ» ԿԵԳՐՈՆ



Հինգշաբթի, 6 օգոստոս 2020-ին, յաջորդաբար «Շաղղոյեան» կեդրոն այցելեցին Հայաստանի Հանրապետութեան արտակարգ եւ լիազօր դեսպան Վահագն Աթաբեկեան, Պեյրութի հայ կաթողիկէ պատրիարքական թեմի օգնական եպիսկոպոս Գեորգ Եպս. Ասատուրեան եւ Մերձավոր Արեւելքի Հայ աւետարանական եկեղեցիներու միութեան Կեդրոնական մարմինի ատենակազմի Հայկազեան համալսարանի նախագահ վեր. դոկտ. Փոլ Հայտոյեան:

Հանդիպումներուն ընթացքին խորհրդակցութիւնները ծաւալեցան Լիբանանի մէջ պատահած աղէտին պատճառով լիբանանահայութեան կրած վնասներուն շուրջ: ՀՀ Լիբանանի Կեդրոնական կոմիտէն հաստատեց, որ լիբանանահայութեան կրած մարդկային եւ նիւթական վնասները բաւական ծանրակշիռ են, եւ վերականգնումի ու վերաշինութեան աշխատանքը լուրջ մարտահրաւէր է բոլորին համար: Այսուհանդերձ աշխատանքները արդէն ընթացք առած են եւ զորաշարժը համընդհանուր է:

Շար.ը՝ էջ 4

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԹԻԻ 24

ՄԻ ՄՈՌՆԱՔ, «ՔՈՐՈՆԱ»-Ի ՀԱՄԱՃԱՐԱԿԸ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԻ

Պեյրութի նաւահանգիստի պայթումէն ետք անոր ստեղծած արհաւիրքը պէտք չէ մոռացուի տայ, որ «Քորոնա»-ի համաճարակը կը շարունակէ մնալ ծանր վտանգ:

Առ այդ, կոչ կ'ուղղենք մեր ժողովուրդին, որ հակառակ տիրող կացութեան ահաւոր հետեւանքներուն, շարունակէ կանխագոյնազման միջոցները եւ զգուշ ըլլալ համաճարակի վարակումէն:

Անցնող 10 օրերուն ընթացքին, «Քորոնա»-ի ճգնաժամային շտապին նախաձեռնութեամբ ու ծախսերով, Պուրճ Շամուտի մէջ կատարուեցաւ «Փի. Սի. Ար.»-ի 420 քննութիւն, որոնցմէ ի յայտ եկաւ 22 վարակում:

Վարակուած պարագաները Շտապին ջանքերով ստացան համապատասխան բուժում հիւանդանոցներու կամ մեկուսացման վայրերու մէջ, եւ հակաՆեխտեցաւ անոնց շրջապատը:

«ՔՈՐՈՆԱ»-Ի ԾԳՆԱԺԱՍՍՅՈՒՆ ԵՏԱՊ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԸ ԼԻՔԱՆԱՆԻ ՄԷՋ ՍՏԵՂՈՒԱԾ ԻՐԱՎԻՃԱԿԸ ԵՒ ԼԻՔԱՆԱՆԱՀԱՅՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՔՆՆԱՐԿԱԾ Է ՀՅԳ ԲԻՒՐՈՅԻ ՆԵՐԿԱՅԱՅՈՒՑԻՉԻՆ ՀԵՏ

ՀՀ Մամլոյ դիւանը կը տեղեկացնէ, թէ 6 օգոստոսին Հայաստանի Հանրապետութեան նախագահ Արմէն Սարգսեան Պեյրութի նաւահանգիստին մէջ տեղի ունեցած պայթումին պատճառով ստեղծուած

Շար.ը՝ էջ 4

ՆԱԽԱԳԱՀ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ ԻՐ ՊԱՏՐԱՍՏԱԿԱՍՈՒԹԻՒՆԸ ԿԸ ՅԱՅՏՆԷ ՕԺԱՆԳԱԿԵԼՈՒ ԼԻՔԱՆԱՆԱՀԱՅՈՒԹԵԱՆ

Արցախի Հանրապետութեան նախագահ Արայիկ Յարութիւնեան հեռաձայնային կապ հաստատեց ՀՀ Բիւրոյի անդամ Բենիամին Պլաքճեանի հետ եւ վերահաստատեց Արցախի իշխանութիւններուն

Շար.ը՝ էջ 4

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ ՄԱՐԿԱՍԻՐԱԿԱՆ ՕԳՆՈՒԹԻՒՆ ՊԻՏԻ ՀԱՍՏՆԷ ՊԷՅՐՈՒԹ

Հայաստանի կառավարութիւնը՝ արտաքին գործոց նախարարութեան եւ սփիւռքի գործերու գլխաւոր յանձնակատարի գրասենեակին միջոցով՝ մնալուն կապի մէջ է Լիբանանի կառավարութեան եւ համայնքային կառույցներու ղեկավարներուն հետ՝ եղբայրական Լիբանանին օգնութիւն ցուցաբերելու նպատակով:

Շար.ը՝ էջ 4

ԼԻՔԱՆԱՆԱՀԱՅՈՒԹԵԱՆ ԱԶԱԿՑԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀՅԳ ԱՐՅԱՍԻ ԿԵԳՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԵՒ ՀՕՄԻ ԱՐՅԱՍԻ ՄԵՒՈՐԻ ՄԻԱՅԵԱԼ ՆԻՍՏ



6 օգոստոսին ՀՀ Ստեփանակերտի «Նիկոլ Դունան» կեդրոնին մէջ հանդիպում տեղի ունեցած է՝ ՀՀ Լիբանանի Կեդրոնական կոմիտէի եւ Հայ օգնութեան միութեան Արցախի միաւորի վարչութեան անդամներուն մասնակցութեամբ: Ըննարկուած է ծանր վիճակի մէջ յայտնուած լիբանանահայութեան աշակցելու միջոցներուն վերաբերող հարցը:

Շար.ը՝ էջ 4

ԶՕՐԱԿՅՈՒԹԻՒՆ ԵՒ ՀԱՄԵՐԱՇԵՆՈՒԹԻՒՆ. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԽՈՐՀՐԳԱՐԱՆԻ ԾԵՆՔԸ ԼՈՒՍԱԲՈՐՈՒԹԵԱՆ ԼԻՔԱՆԱՆԻ ԳՐՈՇԻՆ ԳՈՅՆԵՐՈՎ




Հայաստանի Ազգային ժողովի շէնքը՝ իբրեւ աշակցութիւն բարեկամ Լիբանանի, երէկ երեկոյեան ժամը 21:00-ին լուսաւորուեցաւ Լիբանանի ազգային դրօշին գոյններով: Լիբանանի դրօշին գոյններով լուսաւորուած է նաեւ Երեսանի քաղաքապետարանի շէնքը: Նշենք, որ Երեսան ու Պեյրութը ընդ քաղաքներ են:

ՄԱՔՐՈՆ. «ԱՅՅԵԼՈՒԹԵԱՆՍ ՆՊԱՏԱԿԸ ԼԻՔԱՆԱՆՑԻ...»

Շարունակում Ա. Էջեի

Յետմիջօրեին Մաքրոն ուղղուեցաւ Պապատա, ուր հանդիպում մը ունեցաւ Նախագահ Անուի հետ: Գերմանիայի ղեկավարը Նախագահ Անուի յայտնեց իր վճռակա- մութիւնը՝ Պէյրուսի պայթումի զոհաբերները եւ անոր պա- տասխանատուները բացայայտելու, ինչպէս նաեւ զանոնք խիստ պատիժներու ենթարկելու առումով: Այնուհետեւ տեղի ունեցաւ հանդիպում Լիբանանի իշխանու- թեան երէք պետերուն՝ Նախագահ Անուի, խորհրդարանի Նախա- գահ Նեպիի Պըրրիի եւ վարչապետ Գասսան Տիպիի հետ:



Հանդիպումէն ետք Պըրրի եւ Տիպի մեկնեցան առանց մեկնա- բանութիւն կատարելու: Մաքրոն յայտնեց, որ իր այցելութեան նպատակն է Լիբանանին եւ լիբանանցիներուն զօրակցութիւն յայտնել, ինչպէս նաեւ պայ- թումի պատճառները իմանալ: Ան ընդգծեց, որ Լիբանան տարիներ է վեր տնտեսական ծանր տարեկան կը դիմագրուէ, եւ այդ տարեկան պետք է լուծել քաղա- քական հօգոր Նախաձեռնութիւններով: Նախագահ Անու ճամբել է ետք Մաքրոն հաստատեց, որ Ֆրան- սա շատ պիտի օժանդակէ Լիբանանին: Երեկոյեան Մաքրոն Ֆրանսական դեսպանատան մէջ ընդունեց լիբանանեան քաղաքական ուժերու եւ խորհրդարանական պլու- րներու ներկայացուցիչները:



Հանդիպումէն ետք Նախկին վարչապետ Սաատ Յարիրի մեկնե- ցաւ առանց մեկնաբանութիւն կատարելու: Ընկերվար յառաջդիմական կուսակցութեան ղեկավար Ռալիտ ժումայլաթ հաստատեց, որ Մաքրոն յստակ էր իր արտայայտու- թիւններուն մէջ, այն իմաստով, որ ան շեշտեց, թէ եթէ մենք մեզի չօժանդակենք, ապա անոնք մեզի պիտի չօժանդակեն: Մարտաա հոսանքի ղեկավար Սլեյման Ֆրեմսիէ յայտնեց, որ Մաքրոն անդրադարձած է աշխատելու փոփոխութեան եւ ոչ թէ վարչակարգի փոփոխութեան: Փաղանգաւոր կուսակցութեան ղեկավար Սամի ժմայէլ ընդ- գծեց, որ Մաքրոն իրականութիւնը ինչպէս որ է ներկայացուցած է:

ԲՈՂՈՔԻ ԿԵՍԳԻՇԵՐԱՅԻՆ ՑՈՅՅԵՐ՝ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՀՐԱԺԱՐԱԿԱՆԸ ՊԱՋԱՆՁՈՂ



Գիշերուան ժամը 11:00-էն սկսեալ երիտասարդ ցուցարար- ներ սկսան հաւաքուիլ Կեդրոնական Պէյրուսի «Լը Կրեյ» պան- դոնի մօտ, ուր սկսան զայրոյթի կանչեր արձակել, պահանջել կառավարութեան հրաժարականը եւ Պէյրուսի Նաւահանգիստի պայթումի պատասխանատուներուն հաշուետուութեան ենթարկուիլը: Շուտով բախումներ ծայր տուին ցուցարարներուն եւ Ներ- քին ապահովութեան ուժերուն միջեւ: Ցուցարարները հրկիզ- ւած անիւներով փակեցին Պէյրուսի քաղաքապետարանի ճամ- բան եւ վկաններ հասցուցին Կեդրոնական Պէյրուսի մէջ գտնուող կարգ մը խանութներու գոյքերուն: Ապահովական ուժերը ցուցարարները ցրուելու համար օգ- տագործեցին արցունքաբեր ռումբեր, մինչ ցուցարարները քարկոծեցին զանոնք: Ցուցարարները խորհրդարանի մուտքե- ռէն մէկուն մօտ ճամբան փակեցին հրկիզելով տախտակներ եւ ծանուցողական պատուանդներ:

«ԱԶԳԱԿ»-Ի ՖՈՒՆԾԻՆ
• Կրէժ Մաթեոսեանի մահուան առիթով՝ - Միաց Գայայեան 50.000 լ. ո.
• «Փէյփալ» ծրագրի միջոցով՝ - Նարեկ Գրիգորեան 10\$

ՆԱԽԱՐԱՐՆԵՐ ՀԱՍԱՆ ԵՒ ՕՂԱՆԵԱՆ-ԳԵՈՐԳԵԱՆ ՍՏՈՒԳԵՅԻՆ ԳԱՇՏԱՅԻՆ ՀԻՒՆԴԱՆՈՅՆԵՐԸ



Առողջապահութեան Նախարար Գասսան Գըլկերակ- ցութեամբ երիտասարդութեան եւ մարմնակրթութեան Նախա- րար Վարդիէ Օհանեան-Գեորգեանի, ուղղուեցաւ Պէյրուսի Մարզական աստիճան, ուր գետնորած էին ռուսական պետու- թեան տրամադրած դաշտային հիւանդանոցները: Նախարարները ստուգեցին այդ հիւանդանոցները: Գասսան ընդգծեց, որ դաշտային այդ հիւանդանոցները պի- տի գետնորած ամբողջ Պէյրուսի մէջ: Նախարար Օհանեան-Գեորգեան հաստատեց, որ Նախա- րարութիւնը մարզական եւ սկստական կառոյցները կը գե- տնդէ պատկան մարմիններուն տրամադրութեան տակ: Ան հաստատեց, որ Նախարարութիւնը պատրաստ է լիբանանցի- ներուն նկատմամբ իր պարտականութիւնները կատարելու: Նշեց, որ Գասսան յայտնեց, թէ Պէյրուսի Նաւահանգիստի պայթումի պատճառով զոհերուն թիւը հասաւ 137-ի, իսկ վի- ռուորուածները մնաց 5000-ի շուրջ:

Պէյրուսի հսկայական պայթումի իբրեւ հետեւանք, լիբա- նանահայութիւնը եւս ունեցաւ իր մարդկային ծանր կորուստ- ները, որոնք ցարդ արձանագրած են 11 զոհեր եւ 250 վիրաւոր- ներ: Լիբանանահայ Նախարարներն են. Տէյիա Կեփիկեան-Յա- կոբեան, Ընսիքա Պեգճեան, Շաք Յակոբեան, Նազար Նա- ճարեան, Ասահիտ Պէրպիլեան, Շաք Պարամպեան, Ալիս Պալեան-Տէկիմենճեան, Լիզա Գաւուքճեան-Կեօզիպէտիլ- Եան, Կայա Ֆուտուլեան, Վարուժ Թոսուեան եւ Սարգիս Թե- քիլեան:

Ան հաստատեց, որ առաջնահերթութիւնը պիտի ըլլայ կառավարու- թեան փոփոխութիւնը: Լիբանանեան ուժեր կուսակցութեան ղեկավար Սամի ժա- ժաի շեշտեց, որ Մաքրոնի Լիբանան այցելութիւնը մեծ քայլ մըն է: Ազգային ազատ հոսանք կուսակցութեան ղեկավար, երեսփո- խան ժըպարան Պասիլ եւ Գասսան Պարմուշին զիմարդութեան պլոքի ներկայացուցիչ, երեսփոխան Մոհամետ Ռաատ մեկնեցան առանց յայտարարութիւն կատարելու: Այսին ուշ, Մաքրոն հանդիպում մը ունեցաւ նաեւ քաղաքացիա- կան նկերութեան ներկայացուցիչներուն հետ: Մաքրոն Լիբանան կատարած իր այցելութիւնը ւարձեց մամ- լոյ ատուիտով մը՝ Ֆրանսական դեսպանատան մէջ: «Ֆրանսան լի- բանանցի ժողովուրդին կողքին է այսօր եւ վաղը եւ երբեք պիտի չըք գայն», յայտարարեց ան: Մաքրոն ըսաւ, որ իրազեկ դարձաւ պատահածին շուրջ լիբա- նանցի իր եղբայրներուն կարծիքներուն եւ մեծ ցաւ ու զայրոյթ տե- սան գետնի վրայ: «Այցելութեանս նպատակը լիբանանցի ազատ ժողովուրդին կողքին կանգնելն է», ըսաւ ան՝ արեւելքէն, որ լիբա- նանցի եւ ֆրանսացի ժողովուրդներուն միջեւ կայ եղբայրութիւն: «Տաւակցութիւնս կը յայտնեմ պայթումի պատճառով կորուստ- ներ կրած բոլոր ընտանիքներուն, ներառեալ՝ Ֆրանսացի քաղաքա- ցիները, որոնք նոյնպէս վնասներ կրած են: Այսպիսի արտակարգ պայմաններու մէջ Ֆրանսան իր ամբողջ ներուժը ի սպաս պիտի դնէ Լիբանանի տրամադրութեան տակ», ըսաւ Մաքրոն՝ Նշելով, որ արդէն իսկ օժանդակութիւններ ուղարկուած են Լիբանան, եւ յա- շորդող ժամերուն յաւելեալ օդանաւեր եւ մասնագիտացուած խումբեր պիտի հասնին Պէյրուս՝ անյայտ կորուսածներու որոնու- ղական աշխատանքներուն օժանդակելու եւ պատահածին շուրջ հետաքննութիւններուն մասնակցելու համար: «Տաւակցիկ հինգ- շաբթի օր եւս դեղորայքի իմաստով օժանդակութիւններ պիտի հասնին Լիբանան, եւ այս օժանդակութիւնները պիտի շարունակ- ւին, մինչեւ որ վնասներ կրած բոլոր քաղաքացիները ստանան պետք եղած դեղորայքը, սննդեղները եւ միջոցները՝ վերականգնելու համար քանդուած տուները», յայտարարեց Մաքրոն՝ շնորհակա- լութիւն յայտնելով Ֆրանսական այն նկերութիւններուն, որոնք պատրաստակամութիւն ցուցաբերեցին օգնելու Լիբանանին: «Ֆրանսան՝ Միացեալ Նահանգներու, Եւրոպական Միութեան եւ Միջազգային դրամատան հետ միասին պիտի կազմակերպէ մի- ջազգային համագումար մը՝ քննարկելու Լիբանանի տրամադր- ւելիք դրամական օժանդակութիւնները, որոնցմով լիբանանցիները պիտի հոգան իրենց սննդամթերքի, դեղորայքի եւ բնակութեան կարիքները», ըսաւ Ֆրանսայի Նախագահը: Մաքրոն ըսաւ, թէ ամէն մարդ վստահ է, որ թէեւ հարուած ծանր է, բայց Լիբանան պիտի յաղթահարէ այս դժուարութիւնը՝ Նշելով, որ երիտասարդներուն հետ գետնի վրայ կատարած իր հանդիպումներուն ընթացքին անոնք դէմքերուն վրայ նշմարած է զայրոյթը կատարուածէ: «Ես կը վստահեցնեմ, որ Ֆրանսան նաեւ օժանդակութիւններ պիտի տրամադրէ կրթական մարզին եւ յատկապէս համալսարան- ներուն, որովհետեւ մենք այս փուլին կը գիտակցինք կրթութեան եւ գիտութեան, ինչպէս նաեւ դպրոցներու եւ համալսարաններու առաջնութեան կարեւորութեան: Ֆրանսան պիտի աջակցի մշա- կոյթի եւ խօսքի ազատութեան սփռման ու լիբանանցիներու կար- դութիւններուն զարգացման», ըսաւ Մաքրոն՝ յիշեցնելով, որ շուրջ երկու տարի առաջ Ֆրանսան կազմակերպած էր զանազան համա- գումարներ՝ օժանդակելու Լիբանանին, եւ պահանջած, որ բարե- կարգումներ կատարուին ելեկտրականութեան մարզին մէջ: «Օժանդակութիւնները կը սպասեն բարեկարգումներուն: Նոր քաղաքական համակարգ պետք է հաստատուի, եւ արմատական փոփոխութիւններ պետք է կատարուին: Ես շատ անկեղծ էի լիբա- նանցի ղեկավարներուն հետ եւ թափանցիկ պատասխաններ կ'ակնկալեմ զանազան խնդիրներու շուրջ իմ տուած հարցումնե- րուն:

ՇՏԱՊ ՕԳՆՈՒԹԵԱՆ ԳԵՐԱԳՈՅՆ ԽՈՐՀՈՒՐԴԻ ՈՒ ՎՆԱՍՆԵՐԸ ԳՆԱՀԱՏԵԼՈՒ ՅԱՆՃՆԱԽՈՒՄԸ ՊԻՏԻ ՍՏՈՒԳԵՆ ՊԵՅՐՈՒԹԻ ՆԱԲԱՆԳԻՍՏԻ ՊԱՅԹՈՒՄԻՆ ՊԱՏՃԱՄԱԾ ՎՆԱՍՆԵՐԸ

Շտապ օգնութեան գերագոյն խորհուրդը երէկ հրապարակեց հաղորդագրութիւն մը, որ կը նշէ, թէ լիբանանեան բանակին յատուկ վնասնե- րու գնահատումի յանձնախումբին հետ պիտի ստուգեն Պէյրուսի Նաւահանգիստի պայթումի պատճառով վնասները:

Շտապ օգնութեան գերագոյն խորհուրդը քա- ղաքացիներէն պահանջեց լուսանկարներով եւ տեսախցիկներով նկարել վնասները, ունեցալ՝ աշ- խատավայրի, վաճառատան, շէնքի կամ ինքնա- շարժի պատկանելիութեան յատուկ փաստա- թուղթ, անձնաթուղթի պատճեն, ուղղովի շրջանի թաղապետին եւ վնասներուն յատուկ տեղեկա- գիր մը պատրաստել, յստակ կերպով նշել հաս- ցեն՝ ընդգրկելով կալուածի եւ հեռաձայնի թիւ- րը:

Այս բոլոր փաստաթուղթերը ներկայացնել լի- բանանեան բանակին յատուկ վնասներու գնա- հատումի յանձնախումբին՝ թաղապետին միջո- ցով կամ անձամբ՝ այդ յանձնախումբին անդամ- ներուն կողմէ բնակարաններուն այցելութեան ընթացքին:

Նշեալ փաստաթուղթերը պատրաստելու ետք, վնասները կարելի է վերացնել եւ նորոգութեան աշխատանքները կատարել, եթէ ատկապ կատա- րելու փափաք կայ, պայմանով որ այդ մասին պաշտօնական ստացագիր ապահովուի եւ ներ- կայացուցի վնասներու գնահատումի յանձնա- խումբին:

Շտապ օգնութեան գերագոյն խորհուրդին եւ վնասներու գնահատումի յանձնախումբին փաս- տաթուղթեր ներկայացնելու դիմումի համար անհրաժեշտ է վնաս կրող քաղաքացիի մը հեռա- ձայնի թիւը կամ ազգականի մը հեռաձայնի թիւը տրամադրել:

- Չոհերուն հարազատներէն պահանջուած փաստաթուղթերն են.
- Անձնաթուղթի պատճեն
- Բժիշկի տեղեկագիր
- Ընտանեկան իխրաժ քայտ, որուն մէջ շնչուած ըլլալ գոհին անունը
- Օգտուողի անձնաթուղթի պատճեն:
• Վնասուած ինքնաշարժներու սեփականա- տերներէն պահանջուած փաստաթուղթերն են.
- Անձնաթուղթի կամ իխրաժ քայտի պատճեն
- Ինքնաշարժ վարելու փաստաթուղթի պատ- ճեն
- Անգործածութեան վկայագիր (Չարձա- նագրուած ինքնաշարժներու պարագային):
• Բնակարաններու եւ վաճառատուներու սե- փականատերներէն պահանջուած փաստաթու- թերն են.
- Անձնաթուղթի կամ իխրաժ քայտի պատճեն
- Բնակարանի կամ վաճառատան կալուածա- գիրի պատճեն
• Բնակարաններու եւ վաճառատուներու վարձակալներէն պահանջուած փաստաթու- թերն են.
- Անձնաթուղթի կամ իխրաժ քայտի պատճեն
- Վարձակալութեան կալուածագիրի պատ- ճեն:
Բնակութեան փաստաթուղթ, որ կ'ընդգրկէ կալուածը նորոգելու կալուածատիրոջ խոստու- մը:
Վնասներու գնահատումի յանձնախումբի գրասենեակին կապուելու համար կարելի է հե- ռաձայնել 01-293651 թիւին:

ԼԻՔԱՆԱՆԻ ՄԵՉ «ՔՈՐՈՆԱ» ԺԱՅՐՈՎ ՎԱՐԱԿՈՒԱԾՆԵՐՈՒՆ ԹԻԸ ՀԱՍԱԻ 5672-Ի, ՄԱՀՈՒԱՆ ՊԱՐԱԳԱՆԵՐՈՒՆԸ՝ 70-Ի, ԻՍԿ ԱՊԱՔԻՆԱԾՆԵՐՈՒՆԸ՝ 1974-Ի

Առողջապահութեան Նախարարութեան տեղեկու- թիւներուն համաձայն, երէկ Լիբանանի մէջ «Քորո- նա» ժահրով վարակուածներուն թիւը հասաւ 5672-ի՝ վերջին 24 ժամուան ընթացքին արձանագրելով 255 նոր վարակուածներ, որոնցմէ 251-ը՝ տեղացիներ, իսկ 4-ը՝ Պէյրուս վերադարձած քաղաքացիներ: Նախարարութիւնը յայտնեց, որ ցարդ «Քորոնա» ժահրով 70 վարակուած պարագաներ մահացած են, իսկ 1974 ուրիշներ՝ ապաքինած:

Նշեց, որ առողջապահութեան Նախարար Գա- սսան յայտնեց, որ մտավախութիւն կայ, որ յառաջիկայ 10 օրերուն ընթացքին «Քորոնա» ժա- հրով վարակուածներուն թիւը կրնայ բարձրանալ՝ նկատի ունենալով, որ Պէյրուսի Նաւահանգիստի պայթումի պատճառով վիրաւորները դարմանելու ընթացքին Նախագրուական քայլերը անտեսուած էին: «Այս շրջագիծին մէջ դաշտային հիւանդանոցնե- րուն մէկ մասը պիտի յատկացուի «Քորոնա» ժահրով վարակուած պարագաներուն», հաստատեց Գասսան:

ՀՅԳ ԻՐԱՆԻ ՀԱՐԱՎԱՅԻՆ ՇՐՋԱՆԸ ԻՐ ՉՈՐԱԿՑՈՒԹԻՒՆԸ ԿԸ ՅԱՅՏՆԵ ԼԻՔԱՆԱՆԱՀԱՅՈՒԹԵԱՆ



ՀՅԳ Իրանի Հարավային շրջանի Կեդրոնական կոմիտեն հրապարակած է յայտարարություն մը, որուն մէջ իր զօրակցութիւնը կը յայտնէ լիբանանահայութեան՝ Պէյրութի նաւահանգիստի պայթումին եւ անոր պատճառով արձանագրուած զոհերուն եւ վնասներուն առնչութեամբ: Յայտարարութեան մէջ նշուած է.

Հայ յեղափոխական դաշնակցութեան Իրանի Հարավային շրջանի Կեդրոնական կոմիտեն իր անվերապահ զօրակցութիւնն է յայտնում Լիբանանի ժողովրդին եւ լիբանանահայութեանը, Պէյրութի նաւահանգիստում տեղի ունեցածի հետեւանքով արձանագրուած կորուստներին եւ վնասների կազակցութեամբ:

Մեր խորագգաց ցաւակցութիւնն ենք յայտնում զոհուածների ընտանիքներին եւ շուտափոյթ ապաքինում մտղթում վիրաւորներին:

Անկախ այն հանգամանքից, որ լիբանանահայութիւնը վերապրելով Յեղասպանութիւնից մեծ փորձութիւնների միջից է անցել եւ անցում է՝ սկսած քաղաքացիական պատերազմից մինչեւ վերջին ժամանակներում տնտեսական անսխալըթաց անկման հետեւանքով յառաջացած ճգնաժամն ու դրան զուգահեռ համավարակի հետ կապուած դժուարութիւնները, սակայն միշտ լինելով պատենշի վրայ, իր առաւելագոյնն է նուիրաբերել հայ ժողովուրդի համահայկական կարիքների ուղղութեամբ: Թէեւ լիբանանահայերը այս անգամ կանգնած են անսխալըթաց եւ լրջագոյն մարտահրաւերի առջեւ, սակայն կասկած չկայ, որ ինչպէս միշտ այն կազակցութեամբ ու միասնական համայնքը յաղթահարելու է բոլոր դժուարութիւնները:

Մենք բոլոր հնարաւորութիւններով պատրաստ ենք օժանդակելու Լիբանանում ապրող մեր հայրենակիցներին:

ՀՅԳ ԻՐԱՆԻ ՀԱՐԱՎԱՅԻՆ ՇՐՋԱՆԻ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

ՀՅԳ ԱՐԵՎՄՏԵԱՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՇՐՋԱՆԸ ՉՈՐԱԿՑՈՒԹԻՒՆ ԿԸ ՅԱՅՏՆԵ ԼԻՔԱՆԱՆԻՆ



ՀՅԳ Արեւմտեան Ամերիկայի Կեդրոնական կոմիտեն հրապարակած է յայտարարութիւն մը, որուն մէջ իր զօրակցութիւնը կը յայտնէ լիբանանահայութեան՝ Պէյրութի նաւահանգիստի պայթումին եւ անոր պատճառով արձանագրուած զոհերուն եւ վնասներուն առնչութեամբ: Յայտարարութեան մէջ նշուած է.

Հայ յեղափոխական դաշնակցութեան Արեւմտեան Ամերիկայի Կեդրոնական կոմիտեն իր ամբողջական զօրակցութիւնը կը յայտնէ Պէյրութի եւ համայն Լիբանանի հայ համայնքին՝ նոյն ժամանակ ցաւակցելով այն ընտանիքներուն, որոնք կորուստներ ունեցան անցնող օրերուն: 4 օգոստոսին պատահած ահաւոր պայթումը մեծապէս ցնցեց Պէյրութ քաղաքը, տեղւոյն հայ համայնքը, ինչպէս նաեւ ամբողջ երկիրը: Պայթումը նաեւ ուժգին անդրադարձ ունեցաւ Միացեալ Նահանգներու արեւմտեան շրջանին մէջ, ուր կ'ապրին մեծաթիւ քաղաքացիներ, որոնք Լիբանանի մէջ ապրող հարազատներ ունին:

Շատ սուղ է այս ողբերգութեան պատճառով վիրաւորուած, ընտանիքի անդամ մը կորսնցուցած, իր տան կամ գործատեղիին աներակ դառնալուն ակախատեալ եղած եւ դեռ քիմիական փոշիներու անտեսանելի հետեւանքները կրելու դառապարտուած իւրաքանչիւր լիբանանցի հայ անհատի վճարած գինը:

Ըստ ստացուած տեղեկագրութիւններուն, համայնքի կեդրոնները եւ հաստատութիւնները կրած են նիւթական վնասներ, յատկապէս «Շաղղոյեան» կեդրոնը Պուրճ Յամուտի մէջ, ուր ՀՅԳ Բիւրոյի եւ Կեդրոնական կոմիտէի գրասենեակներուն կողքին կը գտնուին նաեւ «Ազդակ» օրաթերթի խմբագրութեան եւ Հայ դատի յանձնախումբի Միջին Արեւելքի գրասենեակները:

Պայթումէն վնասուած են Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսարանը եւ կրօնական, մշակութային ու կրթական բազմաթիւ այլ հաստատութիւններ:

Պատահած պայթումը կը զուգահեռ պայթի ժամանակի, երբ Լիբանանի մեր համայնքը ամիսներէ ի վեր կը դիմակայէր Լիբանանի տնտեսութեան ֆինանսական անսխալըթաց անկումի ահաւոր դժուարութիւնները, զուգահեռ՝ «Քորոնա» ժահրի համաշխարհային համաճարակին առթած դժուարութիւններուն:

Այս պայթումին ստեղծած տագնապին առաջին վայրկեաններէն իսկ կապի մէջ ենք Լիբանանի մեր ընկերներուն հետ, որոնց յայտնած ենք մեր անսակարկ աջակցութիւնը՝ կարելի բոլոր միջոցներով օգնելու եւ օժանդակելու մեր համայնքին եւ վերակառուցելու վնասուած կալուածները: Ինչպէս անցելի պարագային, ՀՅԳ Արեւմտեան Ամերիկայի Կեդրոնական կոմիտեն որեւէ միջոց պիտի չիսնայէ իր շարքերը, ուղեկից կազմակերպութիւնները եւ հաստատութիւնները, ինչպէս նաեւ համայն Ամերիկայի համայնքը զօրաշարժի ենթարկելու՝ հասնելու համար Լիբանանի մէջ ապրող մեր հայրենակիցներուն կարիքներուն՝ իրենց դժուար օրերուն:

ՀՅԳ ԱՐԵՎՄՏԵԱՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

ԹԵՂԵՍԻ ՀԱՅՈՑ ԹԵՄ

ԽՈՐՀՐԳԱԿՑԱԿԱՆ ՀԱՆԳԻՊՈՒՄ ՊԵՅՐՈՒԹԻ ՆԱԻԱՀԱՆԳԻՍՏԻՆ ՄԷՋ ՊԱՏԱՀԱԾ ՊԱՅԾՈՒՄԻՆ ԵՒ ԱՆՈՐ ՀԵՏԵՒԱՆՔՆԵՐՈՒՆ ՎԵՐԱՅՄԱՆ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ

Չորեքշաբթի, 5 օգոստոսի առաւօտեան, Թեղեւսի հայոց թեմի առաջնորդ Սեպուհ արք. Սարգսեանի հրաւերով յատուկ հանդիպում տեղի ունեցաւ Թեղեւսի հայոց թեմի Թեմական խորհուրդի ատենապետ Նորայր Արամեանի եւ ՀՅԳ Բիւրոյի անդամ Վիգէն Բաղդուսեանի հետ: Հանդիպման հիմնական նպատակն էր Պէյրութի մէջ տեղի ունեցած ահաւոր պայթումին պատճառով յառաջ եկած կացութեան մասին խորհրդակցելը:



Սրբազան հայրը զեկուցեց, որ վեհափառ հայրապետին հետ խօսած է եւ թեմին զօրակցութիւնն ու աջօրէնները փոխանցած անոր, ինչպէս նաեւ հեռանձայնային հաղորդակցութիւն ունեցած է Լիբանանի հայոց թեմի առաջնորդ Շահէ արք. Փանոսեանի ու Պուրճ

Համուտի քաղաքապետ Մարտիկ Պօղոսեանի հետ եւ անոնց յայտնած թեմի զօրակցութիւնն ու պատաստակամութիւնը Լիբանանի թեմին օգտակար ըլլալու առնչութեամբ: Ներկաները խորհրդակցութեան ետք որոշեցին անհրաժեշտ միջոցները դիմել՝ Լիբանանի թեմին նիւթական եւ բարոյական օժանդակութեամբ մեղմացնելու աղետահար ժողովուրդին վիճակը:

ՀՅԳ ՅՈՒՆԱՍՏԱՆԻ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ



ՀՅԳ Յունաստանի Կեդրոնական կոմիտեն հրապարակած է յայտարարութիւն մը, որուն մէջ իր զօրակցութիւնը կը յայտնէ լիբանանահայութեան՝ Պէյրութի նաւահանգիստի պայթումին եւ անոր պատճառով արձանագրուած զոհերուն եւ վնասներուն առնչութեամբ: Յայտարարութեան մէջ նշուած է.

Պէյրութի մէջ ցնցիչ պայթումի ահաւոր լուրը ստանալով՝ ՀՅԳ Յունաստանի Կեդրոնական կոմիտեն մեծ անհանգստութեամբ եւ խոր մտահոգութեամբ հետեւեցաւ լուրերու տարափին, կապ հաստատելով ՀՅԳ Բիւրոյի եւ Լիբանանի մեր կազմակերպութեան պատասխանատուներուն հետ, տեղեկութիւններ քաղելով էլ հայահոծ շրջաններու, ազգային-միութեանական հաստատութիւններուն եւ մեր հայրենակիցներուն մասին իրավիճակը պարզող մանրամասնութիւններ ստանալու մտահոգութեամբ:

Ողբերգութիւնը մեծ է, պայթումին հետեւանքով յառաջացած՝ մարդկային զոհերու եւ նիւթական տարածու վնասներու պատճառով:

ՀՅԳ Յունաստանի ամբողջ կազմին զօրակցութիւնն ու պատաստակամութիւնը կը յայտնենք Լիբանանի մեր հայրենակիցներուն՝ կիսելով անոնց ցաւն ու անձկութիւնը:

ՀՅԳ ՅՈՒՆԱՍՏԱՆԻ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ Աթէնք, 5 օգոստոս 2020

ՄԱՀԱԶԳ

Տիար Գրիգոր Աթիկեան Տեր եւ տիկին Մայք Աթիկեան եւ զաւակունք Տեր եւ տիկին Միշել եւ Ռիթա Օհանեսեան

եւ զաւակունք Տեր եւ տիկին Նոհատ եւ Հուրի Պժըք եւ զաւակունք Տեր եւ տիկին Միհրան Մարկարոսեան եւ զաւակունք Տիկին Սիրվարդ Հայոյեան եւ զաւակունք Տիկին Էլիզ Զերմեթեան եւ զաւակունք Տիկին Սոնիք Չերքեզեան եւ զաւակունք Աթիկեան եւ Մարկարոսեան ընտանիքներ Օհանեսեան եւ Պժըք ընտանիքներ Համփոյեան եւ Զերմեթեան ընտանիքներ Չերքեզեան եւ Շիրինեան ընտանիքներ եւ համայն ազգականներ կը զուժեն իրենց կնոջ, մօր, մեծ մօր, քրոջ, հօրաքրոջ, մօրաքրոջ եւ հարազատին՝

ՄԻՄԻ ԱԹԻԿԵԱՆԻ (ՃՆՆԵԱՂ՝ ՄԱՐԿԱՐՈՍԵԱՆ)

մահը, որ պատահեցաւ հինգշաբթի, 6 օգոստոս 2020-ին: Յուլարկաւորութեան եւ թաղման արարողութիւնը կատարուեցաւ հինգշաբթի, 6 օգոստոսին, կէսօրէ ետք ժամը 4:00-ին, Պուրճ Յամուտի Հայ կաթողիկէ գերեզմանատան մատրան մէջ: •Ներկայս ընդունիլ իբրեւ մահազոյ: •ՇԱՆՕԹ.- Երկրին պատահական կացութեան եւ «Քորոնա» ժահրին պատճառով ցաւակցութիւնները կ'ընդունուին հեռանձայնով:

ՀԱՂՈՐԳԱԳՐՈՒԹԻՒՆ

Մերձուր Արեւելքի Հայ աւետարանական եկեղեցիներու միութեան (ՄԱՀՄԵՄԻ) Կեդրոնական մարմինը՝ իր 5 օգոստոս 2020-ի շտապ կոչով ընթացքին իր խոր կսկիծը արտայայտեց 4 օգոստոսին Պէյրութի նաւահանգիստին մէջ պատահած ահաւոր պայթումին համար, որ պատճառեց ո՛չ միայն մահեր, մարդկային ֆիզիքական վնասներ եւ մեծ քանակութեամբ, այլ նաեւ յաւելեալ կաշկանդիչ բեռնաւորումներ դրաւ արդէն իսկ ծանրագոյն տագնապներու մատնուած երկրին վրայ:

ՄԱՀՄԵ Միութիւնը կը խնդրէ աշխարհատարած ամբողջ եկեղեցիներ, որ ջերմեռանդ ազօրթ բարձրացնէ Լիբանանի համար եւ կարելի ընէ աստարելու բարեսիրական, կառավարական եւ այլ կազմակերպութիւններու աշխատանքին՝ օժանդակելու համար, որ Լիբանանը յաղթահարէ իր բազմապատկառ մարտահրաւերներն ու նեղութիւնները: Տուներ, գործատեղիներ, դպրոցներ, եկեղեցիներ եւ հաստատութիւններ կանգնած են վերաշինութեան լուրջ կարիքներու դիմաց: Անհրաժեշտ է նամանաւանդ ազօրթել յուսահատած ժողովուրդին ֆիզիքական եւ հոգեկան բուժումին համար. ան արդէն կը գտնուի ճգնաժամային վիճակներու մէջ: ՄԱՀՄԵ-ը, իր կարգին, պիտի աշխատի կարելի եղածին չափ օգնութիւն հասցնել իր տեղական հաստատութիւններուն եւ ընդհանուր շրջանակին միջոցով:

Մեր խորին երախտագիտութիւնը կ'ուզենք յայտնել բոլոր այն գործակից եւ հաւատակից մարմիններուն եւ անձերուն, որոնք այս դեպքէն անմիջապէս ետք հաղորդեցին իրենց սրտակցութիւնը եւ իրենց բարոյական ու նիւթական զօրակցութեան պատրաստակամութիւնը յայտնեցին ՄԱՀՄԵ-ին: Թող Զրիստոսի Հոգին առատապէս բնակի մեր մէջ՝ իբրեւ իր վկաները, խոր ցաւի այս օրերուն մէջ:

ՄԱՀՄԵ-Ի ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ Պէյրութ, 6 օգոստոս, 2020

ՄԱՀԱԶԳ

Տիկին Ժուլիանա Նաճարեան եւ զաւակները՝ Մակալի եւ Միշել-Ժորժ Տեր եւ տիկին Անդրանիկ եւ Ժիլի Տուզճեան եւ զաւակունք Տեր եւ տիկին Դաւիթ եւ Սիւզի Ուրֆալեան եւ զաւակունք Տեր եւ տիկին Ժան-Զրիսթֆ եւ Թալին Շիւնիօ եւ զաւակունք

Տիկին Սուատ Ուաքիմ Տեր եւ տիկին Զարլօ եւ Հալա Փափալարտօ

եւ զաւակունք Տիկին Մարիթան Տերտերեան եւ զաւակունք Նաճարեան եւ Տուզճեան ընտանիքներ Ուրֆալեան եւ Շիւնիօ ընտանիքներ Տերտերեան եւ Սահակեան ընտանիքներ Տաու եւ Ուաքիմ ընտանիքներ Փափալարտօ եւ Թետոր ընտանիքներ Իմաստունեան եւ Մատիսեան ընտանիքներ Բարթամեան եւ Գոյումեան ընտանիքներ Մանուկեան եւ Փանօ ընտանիքներ Խուրի ընտանիք եւ համայն ազգականներ կը զուժեն իրենց ամուսնոյն, հօր, եղբոր, մօրեղբոր եւ հարազատին՝

ՆԱԶԱՐ ՄԻՇԵԼ ՆԱՃԱՐԵԱՆԻ (ՃՆՆԵԱՂ՝ 1957-ԻՃ)

մահը, որ պատահեցաւ երեքշաբթի, 4 օգոստոս 2020-ին, Պէյրութի նաւահանգիստի պայթումին պատճառով:

Յուլարկաւորութեան արարողութիւնը պիտի կատարուի շաբաթ, 8 օգոստոս 2020-ին, կէսօրուան ժամը 12:00-ին, Հայ կաթողիկէ Ս. Եղիա-Ս. Գրիգոր Լուսաւորիչ տաճարին տեղեցոյ մէջ, ուրկէ հանգուցեալին մարմինը պիտի փոխադրուի Պուրճ Յամուտի Հայ կաթողիկէ գերեզմանատունը:

•Ներկայս ընդունիլ իբրեւ մահազոյ: •ՇԱՆՕԹ.- Նկատի ունենալով «Քորոնա» ժահրի համաճարակին ստեղծած դժուարութիւնները, հանգուցեալին ընտանիքը ցաւակցութիւնները պիտի ընդունի հեռանձայնով՝ հետեւեալ թիւերուն ընդմէջէն: •Ժամանա Նաճարեան՝ 03-191314, Սիւզի Նաճարեան-Ուրֆալեան՝ 03-362014, Ժիլի Նաճարեան-Տուզճեան՝ 03-353819:

ՄԱՀԱԶԳ

Տիկին Միւրէ Տոնիկեան Տեր եւ տիկին Դանիէլ եւ Զարլօ Տոնիկեան եւ զաւակունք (Փարիզ) Տեր եւ տիկին Տիմոթի եւ Սոլին Շուլեյրի եւ զաւակունք (Փարիզ)

Տիար Փաթրիք Տոնիկեան եւ զաւակը (Կիպրոս) Տեր եւ տիկին Նորայր եւ Իվոն Թորիկեան (Լոնտոն) Տեր եւ տիկին Գեորգ եւ Նիկո Սաչլըեան (Ֆրանսա) Տեր եւ տիկին Վաչէ եւ Ռեթեկա Կոկանեան

եւ զաւակունք (Թորոնթօ) Մալքալա եւ Զարամ ընտանիքներ Շուլեյրի եւ Սաչլըեան ընտանիքներ Կոկանեան եւ Սարգիսեան ընտանիքներ Զեչիշեան ընտանիք եւ համայն ազգականներ կը զուժեն իրենց ամուսնոյն, հօր, աներոջ, եղբոր, մօրեղբոր եւ հարազատին՝

ՅԱԿՈՒԿ ԿԻՐԱԿՈՍ ՏՕՆԻԿԵԱՆԻ (ՃՆՆԵԱՂ՝ 1936-ԻՃ)

մահը, որ պատահեցաւ 4 օգոստոս 2020-ին, յետ կարճատեւ հիւանդութեան:

Թաղման արարողութիւնը կատարուեցաւ հինգշաբթի, 6 օգոստոս 2020-ին, Ֆըրն Շոպպեքի Ազգային գերեզմանատան մատրան մէջ: •Ներկայս ընդունիլ իբրեւ մահազոյ: •ՇԱՆՕԹ.- Երկրին ապահովական կացութեան եւ «Քորոնա» ժահրին պատճառաւ, ցաւակցութիւնները կ'ընդունուին հեռանձայնով: 03/363818 (Միւրէ Տոնիկեան), 0033 6589 61015 (Դանիէլ Տոնիկեան), 0033 6616 92285 (Սոլին Շուլեյրի), 0035 7969 56794 (Փաթրիկ Տոնիկեան):

ՄԱՀԱԶԳ

Տիկին Նայիրի Եագուպեան-Յակոբեան եւ զաւակները՝ Անիա եւ Զրիսթօքըր Տիար Խաչիկ Յակոբեան Տեր եւ տիկին Միհրան եւ Ալին Գազազեան

եւ զաւակունք Տեր եւ տիկին Յակոբ եւ Լարիսա Յակոբեան

եւ զաւակունք Տեր եւ տիկին Բաֆֆի եւ Լենա Եագուպեան Պերճ Եագուպեան եւ ընտանիք Հրաչ Եագուպեան եւ ընտանիք Յակոբեան եւ Եագուպեան ընտանիքներ Գազազեան եւ Եթերեան ընտանիքներ Սամիս ընտանիք եւ համայն ազգականներ կը զուժեն իրենց հարազատին՝

ՇԱՆԹ ՅԱԿՈՒԿԵԱՆԻ

մահը, որ պատահեցաւ երեքշաբթի, 4 օգոստոս 2020-ին, Պէյրութի նաւահանգիստի պայթումին պատճառով:

Յուլարկաւորութեան արարողութիւնը պիտի կատարուի այսօր՝ ուրբաթ, 7 օգոստոսին, կէսօրէ առաջ ժամը 11:00-ին, Անթիլիասի Ս. Գրիգոր Լուսաւորիչ մայր տաճարին մէջ, ուրկէ հանգուցեալին մարմինը պիտի փոխադրուի Պուրճ Յամուտի Ազգային գերեզմանատունը:

•Ներկայս ընդունիլ իբրեւ մահազոյ: •Նկատի ունենալով «Քորոնա» ժահրի համաճարակին ստեղծած դժուարութիւնները, հանգուցեալին ընտանիքը ցաւակցութիւնները պիտի ընդունի հեռանձայնի եւ ընկերային ցանցերու միջոցով:

ՄԱՔՐՈՆ. «ԱՅՅԵԼՈՒԹԵԱՆ...»

Շարունակում 2-րդ էջին

Սեպտեմբեր 1-ին պիտի վերադառնա Լիբանան, եւ եւ վտահ եմ, որ որակական մեծ ուսում կարելի է կատարել», եզրափակեց Ֆրանսայի նախագահը:

Անկախ Մաքրոնի պաշտօնական այցելութենէն, մայրաքաղաք Պեյրուօի մէջ մաքրութեան եւ նորոգութեան աշխատանքները շարունակուեցան:

Աղետի գոտի դարձած Պեյրուօի նաւահանգիստին մէջ փրկարար աշխատանքները եւ շարունակուեցան:

Փրկարար աշխատանքներուն մասնակցող ֆրանսական խումբի պատասխանատուները ընդգծեցին, որ տակաւին կարելի է աւերակներուն տակէն ողջ քաղաքացիներ փրկել:

Միւս կողմէ, Լիբանանեան Կարմիր խաչի տնօրէն Ժորժ Զըթթանէն յայտնեց, որ աւերակներուն տակէն դուրս բերուած են դիակներու մնացորդներ, որոնց ինքնութիւնը կարելի չէ եղած ճշդել:

Այս մտահոգութեամբ, Ներքին ապահովութեան ուժերը անյայտ կորսուածներու ընտանիքներէն խնդրեցին ուղղուիլ իրենց հաստատած կեդրոնները եւ «Տի. Էն. Էյ.»-ի քննութիւններ սերկայացնել:

Ներքին ապահովութեան ուժերուն հաստատած կեդրոններն են. Զըլու ոստիկանատունը, Արայայի Ներքին ապահովութեան ուժերու համալիրը, Պապատայի ոստիկանատունը, Ճիւնիի սերայը, Չաիլիի ոստիկանատունը, Պապայեքի, Սայտայի, Նապաթիի եւ Թրիփոլիի ոստիկանատուները:

Յետաքննութիւնը շարունակելու իմաստով Կերարտ ատեանի ընդհանուր դատախազ Ղասսան Օուէյաթայ արձակեց հրահանգ մը, որ կ'արգիլէ Պեյրուօի նաւահանգիստի տնօրէն Զասան Զրայթեմի, մաքսատան ընդհանուր տնօրէն Պատրի Տահերի, մաքսատան նախկին ընդհանուր տնօրէն Շահֆը Մըրիիի, Նայա Զաժի, Միշել Նահիուլի, Մուսթաֆա Ֆարշուփի եւ Ֆաուզի Պրաքսի ճամբորդութիւնը:

Կեդրոնական դրամատունը Պեյրուօի նաւահանգիստի տնօրէն Զասան Զրայթեմի, մաքսատան ընդհանուր տնօրէն Պատրի Տահերի, մաքսատան նախկին ընդհանուր տնօրէն Շահֆը Մըրիիի, ինչպէս նաեւ Նայա Զաժի, Միշել Նահիուլի, Ժորժ Տահերի եւ Նամե Պրաքսի հաշիւները սառեցուց եւ դրամատանին գաղտնիութիւնը վերացուց:

Ուշ գիշերին Չիտուրական ատեանին մօտ կառավարութեան ներկայացուցիչ: Ֆատի Աքրի Պեյրուօի նաւահանգիստին պայթումին գծով 16 կասկածելիներ կալանաւորեց:

Ըստ «Էլ. Պի. Սի.» պատկերասփիւռի կայանին, կալանաւորուածներուն մէջ կը գտնուի նաեւ Զասան Զրայթեմ:

Պեղք է աւելցնել, որ ներքին գործին նախարար Սոհամեո Ֆահմի հարցազրոյցի մը ընթացքին շեշտեց, որ Պեյրուօի նաւահանգիստի պայթումին իմաստով եթէ հետաքննութեան յանձնարարութիւնը նուազագոյնը երեք յանցագործ չանուանէ, ապա ինք իր պաշտօնէն պիտի հրաժարի:

Հանրապետութեան միւլթթի շէյխ Ապտել Լաթիֆ Տըրիան ուղղուեցաւ Սոհամեո Ամին մզկիթ, ուր ծախսաբար արձանագրուած վնասներուն: Ան պահանջեց միջազգային հետաքննութիւն բանալ՝ Պեյրուօի նաւահանգիստի պայթումին առումով:



Յէջ միջազգային հետաքննութիւն բանալ՝ քողագերծելու համար պայթումին դրոյապատճառները:

Իրենց կարգին Սամիր Շահճահ, Ուալիտ Ժամպլաթ եւ Սամի Շեմայիլ պահանջեցին միջազգային հետաքննութիւն բանալ՝ Պեյրուօի նաւահանգիստի պայթումին առումով:

Աւելցնենք, որ Լիբանանին տրամադրուած օժանդակութիւնները շարունակուեցան:

Սեուական Արաբիա եռօրեայ օդային կամուրջ կը հաստատուէ՝ Լիբանանին տրամադրելու համար սննդեղէն եւ դեղորայք:

Լիբանանի մէջ Սեուական Արաբիոյ դեսպան Ուալիտ Պուկարի նախագահեց նիստի մը, որուն ընթացքին քննարկուեցան Լիբանանին տրամադրուելիք սեուական օժանդակութիւնները դիմաւորելու քայլերը:

Իր կարգին, Մարոք օդային կամուրջ մը հաստատեց՝ Լիբանանին տրամադրելով 9 օդանաւ մարդասիրական եւ բժշկական օժանդակութիւն:

Այս օժանդակութիւններուն կողքին, նշենք, որ Կեդրոնական դրամատան որոշումով այսօրու ընթացքին «Ուեսթըրն Եուրօպ» ընկերութիւնը դրամական փոխանցումները ամերիկեան տոյարով պիտի տրամադրէ քաղաքացիներուն՝ առանց անոնց վրայ յաւելեալ տուրք պարտադրելու:

●ՆՇԵՆԸ, որ Զըգպալլայի ընդհանուր քարտուղար սեյիտ Զասան Նապալլա այսօր երեկոյեան ժամը 5:30-ին պիտի արտասանէ պատկերասփռուած ճառ մը՝ անդրադառնալով Լիբանանի մէջ արձանագրուած վերջին զարգացումներուն:

●ՄԻԻՍ կողմէ, երկ երեկոյեան Յորդանանի մէջ Լիբանանի դեսպան Թրեյսի Շամուն հրաժարեցաւ իր պաշտօնէն՝ մերժելով լիբանանեան պետութեան ազգային անվտանգութիւնը: Ան հաստատեց, որ ինք ցաւով պիտի վերադառնայ Լիբանան՝ ընդգծելով, որ պատահածը անվտանգութեան եւ փտածութեան հետեւանք է:

ԳԵՏՊԱՆ ԱԹԱԲԷԿԵԱՆ, ԳԵՐԱՊԱՅԾԱՌ... . .

Շարունակում Ա. էջին

Այս ծիրին մէջ այցելուները գնահատեցին ցարդ տարուած աշխատանքները եւ իրենց զօրակցութիւնը յայտնեցին Կեդրոնական կոմիտէին՝ անդրադառնալով նաեւ լիբանանահայ զաղուրթ բոլոր դժուարութիւնները եւ ճգնաժամային կացութիւնները յաղթահարելու կուտակած հարուստ կենսափորձին: Կեդրոնական կոմիտէն այս ծիրին մէջ ներկայացուց հայահոծ շրջաններու ընդհանուր իրավիճակը, քննարկումներու հետքերն ու բեկորները վերացնելու եւ բնականոն կեանքի նախնական պայմաններ ստեղծելու ընդհանուր պատկերացում մը, ինչպէս նաեւ մատնանշեց այս փուլի աշխատանքային առաջնահերթութիւնները:



Շեշտը դրուեցաւ համագործակցային միացեալ ծիզով ու հայաշխարհի ամբողջական զօրակցութեամբ եւ օժանդակութեամբ աղետի հետեւանքները դարմանելու եւ լիբանանահայութեան վերականգնումի հողովորդը հունաւորելու անհրաժեշտութեան վրայ: Տայտնեց, որ անցնող երկու օրերուն, Հայաստանէն, Արցախէն եւ արտերկրի զանազան զաղուրթներէն կրօնական, պետական, ազգային, կուսակցական, միութենական մեծ թիւով ներկայացուցիչներ եւ հայորդիներ հեռաձայնով կամ այլ միջոցներով կապի մէջ մտան Կեդրոնական կոմիտէին հետ եւ իրենց պարտաստակամութիւնը յայտնեցին զօրակցելու լիբանանահայութեան օժանդակութեան կենսական գործին:

Ներէն կրօնական, պետական, ազգային, կուսակցական, միութենական մեծ թիւով ներկայացուցիչներ եւ հայորդիներ հեռաձայնով կամ այլ միջոցներով կապի մէջ մտան Կեդրոնական կոմիտէին հետ եւ իրենց պարտաստակամութիւնը յայտնեցին զօրակցելու լիբանանահայութեան օժանդակութեան կենսական գործին:

ՆԱԽԱԳԱՀ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ... . .

Շարունակում Ա. էջին

պատրաստակամութիւնը օժանդակելու խոր ճգնաժամի պայմաններուն մէջ յայտնուած լիբանանահայութեան՝ աջակցելու համար զանազան ժողովրդային կարիքներուն: Կարեւոր նկատելով

լիբանանահայութեան դերակատարութիւնը թե՛ համասփիւռքեան եւ թե՛ ընդհանրապէս համահայկական առումներով, նախագահ Յարութիւնեան յայտնեց իր համոզումը, որ լիբանանահայութիւնը, որ վատկած է

ԼԻԲԱՆԱՆԱԿՅՈՒԹԵԱՆ ԱՋԱԿՅԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ... . .

Շարունակում Ա. էջին

ՅՅԳ Արցախի Կեդրոնական կոմիտէի ներկայացուցիչ Դաւիթ Իշխանեան իր խօսքին մէջ նշած է, որ այս օրերուն ամբողջ աշխարհի ուշադրութիւնը սեւեռած է Լիբանանի վրայ: Տարբեր երկիրներէ կոչեց, զօրակցական խօսքեր, օժանդակութեան առաջարկներ կը հնչեն, գործնական քայլերու կը ձեռնարկուին:

ՅՅԳ Արցախի Կեդրոնական կոմիտէն մնայուն կապի մէջ է Լիբանանի ՅՅԳ կառոյցին հետ եւ դէպքի առաջին պահէն պարբերաբար տեղեկութիւններ կը ստանայ տիրող իրավիճակին մասին:

«Գաղտնիք չէ, որ Լիբանանը, մասնաւորապէս լիբանանահայութիւնը 90-ական թուականներէն Արցախի ժողովրդի կողքին է, եւ Արցախի ազատագրական պայքարի առաջին իսկ օրերէն Լիբանան ապրող մեր հայրենակիցները նաեւ գործնականին մէջ մեր շարքերուն մէջ էին», նշած է Դաւիթ Իշխանեան:

Անցած ամիսներուն Լիբանանի տնտեսական ճգնաժամին հետ կապուած ՅՅԳ Արցախի Կեդրոնական կոմիտէն «Ապառաժ» հասարակական կազմակերպութեան միջոցով դրամահաւաք կազմակերպած է:

«Մեր կոչին առաջին արձագանգողներն եղած է Արցախի նախագահ Արայիկ Յարութիւնեանը եւ իր անձնական միջոցներէն նուիրատուութիւն կատարած: Դիմած ենք նաեւ Արցախի գործարար շրջանակներուն», ըսած է Դաւիթ Իշխանեան: Ան շնորհակալութիւն յայտնած է բոլոր նուիրատուներուն:

«Մենք քննարկումներ պիտի ունենանք Արցախի իշխանութիւններուն հետ եւ վստահ ենք, որ ո՛չ միայն Արցախի իշխանութիւնները, այլ նաեւ մեր ժողովուրդը, հասարակական կառոյցները, քաղաքական ուժերը եւ գործարար շրջանակները անգամ մը եւս իրենց մասնակցութիւնը պիտի ունենան այդ աղետի հետեւանքները վերացնելու եւ մեր ժողովուրդին օգնու-

թեան ձեռք մեկնելու առումով», նշած է ՅՅԳ Արցախի Կեդրոնական կոմիտէի ներկայացուցիչը:

ՀՕՄ-ի Արցախի միաւորի ատենապետ Արմինէ Յարութիւնեան վստահութիւն յայտնած է, որ ՀՕՄ-ը իր ներդրումը պիտի ունենայ եւ հանդէս գայ համախմբող ուժի դերին մէջ: «Մենք յատուկ դրամատանային հաշիւ պիտի բանանք եւ նպատակ ունինք հաւաքագրուած գումարները ՀՕՄ-ի խողովակով փոխանցելու Լիբանան ապրող մեր քոյրերուն ու եղբայրներուն: Չեմ կասկածիր, որ մեր ժողովուրդը մեծ աշխուժութիւն պիտի ցուցաբերէ լիբանանահայութեան օգնելու գործին մէջ», ըսած է ՀՕՄ-ի Արցախի միաւորի ատենապետուհին:

Յիշեցնենք, որ ՅՅԳ Բիւրոն լիբանանահայութեան աջակցելու կոչով դիմած է աշխարհասփիւռ հայութեան, նաեւ վստահութիւն յայտնած, որ Հայաստանի եւ Արցախի իշխանութիւնները եւս քայլերու կը ձեռնարկեն գործնական օժանդակութիւն ցուցաբերելու առումով:

«ՀՀԳ բոլոր մարմինները, երիտասարդական-ուսանողական միաւորները, ինչպէս նաեւ մեր ուղեկից միութիւնները՝ ՀՕՄ, Համագայի, ՀՄԸՄ, Հայ դատի գրասենեակները եւ յանձնախումբերը՝ իրենց ամբողջ ներուժը արդէն իսկ զօրաշարժի ենթարկած են ի խնդիր Լիբանանի հայութեան օժանդակութեան:

«Պահը լուրջ է: Խիստ անհրաժեշտ է, որ ազգովին, համահայկական ներուժով դիմագրաւենք այս արհաւիրքը եւ անգամ մը եւս ապացուցենք մէկ ու միասնական ազգ ըլլալու մեր հաւատամքը», նշուած է ՅՅԳ Բիւրոյի կոչին մէջ:

ԿԸ ՆՈՒԻՐԵՆ
• Իբրեւ զօրակցութիւն լիբանանահայութեան վերականգնման՝
Տր եւ տիկին Յակոբ եւ Թալին Գլպաշեան կը կատարեն հետեւեալ նուիրատուութիւնները՝
- «Չուարթոնգ» կեդրոնի 1000\$
- Ազունիէի Ազգային բուժարանի 1000\$

ԵՐԵՍՓՈՒՆԱՆ ԲԱԳՐԱՏՈՒՆԻ... . .

Շարունակում Ա. էջին

Հանդիպումին ընթացքին քննարկուեցան Պեյրուօի նաւահանգիստին հսկայայական պայթումին պատճառով Պուրծ Համուտի մէջ արձանագրուած վնասները:

Բագրատունի կարեւորութեամբ շեշտեց, որ պետութիւնը պարտի արագօրէն շրջանին մէջ արձանագրուած աւերին գնահատումը կատարել եւ լծուիլ վնասները հատուցելու աշխատանքին, որովհետեւ ժողովուրդին միջոցները սպառած են, եւ կարելի չէ ձգձգումներ ընդունիլ:

Հանդիպումը առիթ մը եղաւ նաեւ քննարկելու Ֆրանսայի նախագահ Էմանուէլ Մաքրոնի այցելութիւնը, ինչպէս նաեւ նաւահանգիստի պայթումին պատասխանատուները երեսնա հանելու եւ դատական հետապնդումի ենթարկելու անհրաժեշտութիւնը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ... . .

Շարունակում Ա. էջին

Իրավիճակը եւ լիբանանահայութեան հետ կապուած խնդիրները քննարկած է Հայ յեղափոխական դաշնակցութեան Բիւրոյի ներկայացուցիչ Յակոբ Տր Խաչատուրեանի հետ:

Տեղի ունեցած հեռաձայնային հարցորակցութեան ընթացքին Հայաստանի նախագահը եւ ՀՀԳ Բիւրոյի ներկայացուցիչը անդրադարձած են պայթումին պատճառով ստեղծուած իրավիճակին եւ լիբանանահայութեան կրած վնասներուն:

Նախագահ Սարգսեանն ու Յակոբ Տր Խաչատուրեանը միտքեր փոխանակած են Հայաստանի Հանրապետութեան կողմէ լիբանանահայ համայնքին համար նախատեսուող օգնութեան վերաբերեալ:

Չրուցակիցները կարեւոր նկատած են լիբանանահայութեան անմիջական օժանդակութիւն հասցնելու անհրաժեշտութիւնը եւ խօսած այն հիմնական կարիքներուն մասին, որոնց դեմ յանդիման կանգնած է այսօր լիբանանահայ համայնքը:

ՀՀԳ Բիւրոյի ներկայացուցիչը շնորհակալութիւն յայտնած է Հայաստանի նախագահին այն բանին համար, որ Լիբանանը պատուհասած աղետի այս բարդ պայմաններուն մէջ եւ դժուարին օրերուն, Հայաստանը օգնութեան ձեռք մեկնած է Լիբանանի մեր հայրենակիցներուն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ... . .

Շարունակում Ա. էջին

Այս մասին Հայաստանի վարչապետի մամուլային բանբեր Մանէ Գերգեան գրած է Դիմաւորի իր էջին վրայ:

«Քննարկումներու իբրեւ արդիւնք յստակացած են կարիքներու հիմնական ուղղութիւնները, որոնց ծիրին մէջ Հայաստանի կառավարութիւնը թիրախային օգնութիւն պիտի հասցնէ Պեյրուօի՝ ինչպէս կառավարական, այնպէս ալ համայնքային մակարդակով:

«Օժանդակութիւնը պիտի ըլլայ դեղորայքի, բժշկական սարքերու, սնունդի եւ այլ պարագաներու տեսքով: Հայաստանի կառավարութեան օգնութիւնը տեղ պիտի հասնի ըստ կարելոյն արագ՝ յատուկ թռիչքով», գրած է վարչապետի մամուլային բանբերը:

ՄԱՀԱԶԳ

Տիկին Անժել Մաթեոսեան (Ֆրանսա)
Տեաքը Կարօ եւ Գարէն Մաթեոսեան (Վիեննա)
Տր եւ տիկին Մաթեոս (Մաթիկ) Մաթեոսեան եւ զաւակները՝ Վրէժ, Ժան-Մարի եւ Ժիլիան
Տր եւ տիկին Եգեկէլ եւ Մարալ Մաթեոսեան-Թաշեան եւ զաւակները՝ Ռիթա եւ Հայկազ (Ֆրանսա)

Տիար Վարուժան Մաթեոսեան
Տիկին Էլյանթի Կարոյանեան եւ ընտանիք
Տիկին Վերժին Մուսկոֆեան եւ ընտանիք (Զանաւա)
Տիկին Չարուհի Տեմիրճեան եւ ընտանիք
Տիկին Շանթ Թաշեան եւ ընտանիք
Տր եւ տիկին Յակոբ եւ Ծովիկ Շերնգեան (Մուկուա)
Վարդանեան եւ Մուսկոֆեան ընտանիքներ
Տեմիրճեան եւ Թաշեան ընտանիքներ
Միսեան եւ Սաքըր ընտանիքներ
Հատուտ ընտանիք
եւ համայն ազգականներ կը գուժեն իրենց ամուսնոյն, հօր, մեծ հօր, եղբոր եւ հարազատին՝

ՎՐԵՃ ՄԱԹԵՈՍԵԱՆԻ (Ծնեալ Պեյրուօ)

մահը, որ պատահեցաւ երկուշաբթի, 3 օգոստոս 2020-ին, կէսօրէ առաջ ժամը 11:00-ին, Մարսէյի մէջ, Ֆրանսա:

Յուղարկութեան արարողութիւնը պիտի կատարուի այսօր՝ ուրբաթ, 7 օգոստոսին, կէսօրէ ետք ժամը 3:30-ին, Մարսէյի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցու մէջ, ուրկէ հանգուցեալին մարմինը պիտի փոխարկուի եւ ամփոփուի Մարսէյի գերեզմանատան մէջ:

- Ներկայս ընդունիլ իբրեւ մահազոյ:
•Ցաւակցութեան համար կրնաք հեռաձայնել հանգուցեալին տղուն՝ Մաթիկ Մաթեոսեանին, 03-303931 կամ 71-139073 թիւերուն:
•ԾԱՆՕԹ.- Փոխան ծաղկեպսակի՝ նուիրատուութիւնները կատարել «Ազգակ»-ի ֆոնտին: